Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և
հրդեհային անվտանգության տեսչական
մարմնի կառավարման խորհրդի
20___ թվականի _____ի __-ի որոշմամբ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կառուցվածք 5

Քարտեզ 6

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ 7

1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 7

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ 13

2.Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ 17

2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 17

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ 23

3. Տրանսպորտի բնագավառ 26

3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 26

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ 30

4. Քաղաքաշինության բնագավառ 33

4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 33

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ 38

5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառ 41

5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 41

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ 42

6. ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 43

7. ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱՋԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 48

Ներածություն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ սահմանված 2021-2026 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ սահմանված 2021-2026 թվականների ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը, «Տեսչական մարմինների մասին» օրենքը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր։

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի նպատակները և իր կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված կանխարգելիչ (այդ թվում իրազեկման) միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և ակնկալվող արդյունքը։

Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տիեզերական գործունեության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, տիեզերական գործունեության, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ու հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Դրանց կարգավորման ուղղությամբ 2023 թվականի ընթացքում կատարված աշխատանքը պարբերաբար լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով: Գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Տեսչական մարմինն իր կողմից իրականացվող վերահսկողական

միջոցառումների վերաբերյալ մշտապես թարմացվող մանրամասն տեղեկատվություն է ներկայացնում պաշտոնական ինտերնետային կայքում: Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը կրում են հետևողական բնույթ և նպաստում են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ իրազեկվածության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հաշվի առնելով Տեսչական մարմնի կողմից կարգավորվող խնդիրների կենսական նշանակությունը հանրության համար՝ թեժ գծի հեռախոսահամարով մշտապես տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային դիմում ներկայացնելու, որը միտված է դիմումների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելուն:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա խնդիրների համակողմանի և արհեստավարժ լուծումը պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ՝ թե՛ մարդկային, թե՛ տեխնիկական: Առաջնահերթությունների թվում է մարդկային կապիտալի զարգացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը:

Վերահսկողության ոլորտների առկա խնդիրները և ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումները Գործունեության ծրագրում առանձնացված են ըստ բնագավառների:

Կառուցվածք

Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

- *Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն*
- *Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն*
- *Որակի ապահովման վարչություն*
- *Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն*
- *Տրանսպորտային անվտանգության վարչություն*
- *Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն*
- *Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն*
- *Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն*
- *Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին*

Տարածքային ստորաբաժանումներ

- *Երևանի տարածքային բաժին*
- *Սյունիքի տարածքային բաժին*
- *Արարատի տարածքային բաժին*
- *Արմավիրի տարածքային բաժին*
- *Արագածոտնի տարածքային բաժին*
- *Գեղարքունիքի տարածքային բաժին*
- *Կոտայքի տարածքային բաժին*
- *Տավուշի տարածքային բաժին*
- *Լոռու տարածքային բաժին*
- *Շիրակի տարածքային բաժին*
- *Վայոց ձորի տարածքային բաժին*

Քարտեզ

ՀՀ ՔՏՀԱՏՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ



Պայմանական նշաններ

- Տարածքային ստորաբաժանում

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ

1.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 149 պլանային ստուգում, 5՝ ոչ պլանային ստուգում, 543՝ հրդեհատեխնիկական հետազոտություն: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 3319 խախտում, որոնց վերացման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր: Նախորդ տարիներին տրված կարգադրագրերի կատարման ընթացքը վերահսկելու նպատակով նշված ժամանակահատվածում իրականացվել է 167 վերստուգում, որոնց ընթացքում պարզվել է, որ նախորդ տարիներին բացահայտված խախտումների քանակը նվազել է 69 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 824 եզրակացություն նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանության վերաբերյալ: Հանրությունից ստացվել է 52 բողոք, որից 34-ը՝ թեժ գծով: Հիմնավոր բողոքների 63 տոկոսն արդեն լուծում է ստացել:

1.Տեսչական մարմինն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հաճախակի առնչվում է կարգավորող **օրենսդրության կիրարկմանը** խոչընդոտող և պահանջները հակասական դարձնող հանգամանքների, որոնք դժվարացնում են Տեսչական մարմնի օրենքով սահմանված խնդիրների և նպատակների իրագործումը: Մասնավորապես,

- Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքի համաձայն ստուգումները տնտեսավարողների մոտ պետք է իրականացվեն ստուգումների տարեկան ծրագրով, որը սահմանված կարգով հաստատվելուց հետո հրապարակվում է ստուգումներ իրականացնող մարմնի պաշտոնական կայքում՝ մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը

(հոդված 2.1)։ Գործնականում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ստուգման ենթակա (տարեկան ծրագրով նախատեսված) սուբյեկտի պաշտոնատար անձը, նախապես՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջից տեղեկանալով ստուգման տարեկան ծրագրում ընդգրկված լինելու մասին կատարում է տնտեսավարող սուբյեկտի՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ, կազմակերպաիրավական և/կամ անվանման փոփոխություն, որի արդյունքում ոլորտային նույն ռիսկայնության աստիճան ունեցող տնտեսավարող արդեն նոր «սուբյեկտը» ստուգումների տվյալ տարվա ծրագրում չներառված է դառնում։ Մեկ այլ դեպքում, ստուգման ենթակա սուբյեկտը քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա գործունեությունն իրականացնում է այլ անձին սեփականության կամ այլ իրավունքով պատկանող հասցե ունեցող օբյեկտում։ Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված Հրդեհային անվտանգության կանոնների 6-րդ կետի պահանջի՝ «վարձակալված շենքերում տեղավորված օբյեկտներում հրդեհային անվտանգության ապահովումը կարգավորվում է վարձակալության պայմանագրով։ Պայմանագրում նշված տեղեկությունների բացակայության դեպքում պատասխանատվությունը կրում է վարձատուն»։ Պրակտիկայում հիմնականում հանդիպում են օբյեկտների շահագործման քաղաքացիաիրավական պայմանագրեր, որտեղ բացակայում է հրդեհային անվտանգության ապահովման պատասխանատու անձի ուղղակի նշումը։ Այս փաստը հնարավորություն է տալիս օբյեկտը փաստացի շահագործողին «խուսափել» անվտանգության ապահովման օրենսդրական պահանջների կատարումից։ Անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ իրավական պատշաճ ապահովումներ իրականացնել պայմանագրի մյուս կողմին հայտնաբերելու, ստուգման մասին նրան ծանուցելու, ստուգման ընթացքում նրա ներկայությունն ապահովելու համար։ Հրդեհային անվտանգության մասին օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Տեսչական մարմինը պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման նկատմամբ պետական հրդեհային հսկողություն և վերահսկողություն իրականացնելիս լիազորված է հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու նպատակով անցկացնելու տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ *օբյեկտների* հետազոտություններ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստուգումներ: Այսինքն՝ ոլորտը կարգավորող օրենքը ստուգումները նախատեսում է իրականացնել օբյեկտներում, ոչ թե սուբյեկտների մոտ: Հրդեհատեխնիկական անվտանգության պահանջների ոլորտային օրենսդրության կարգավորման առարկան օբյեկտն է, որում տնտեսավարողը գործունեություն է իրականացնում՝ գնահատելով և կարևորելով այդ օբյեկտի ռիսկը հնարավոր վնասի առաջացման դեպքում: Իրավաբանական ձևակերպումների ձևի պահանջի պահպանումն իրականում առաջ է մղվում՝ հետ մղելով օբյեկտի անվտանգության ստուգման առավել կարևոր նյութական պահանջը:

- Համաձայն «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 10-րդ հոդվածի Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառումը կատարում է տեսչական մարմինը՝ այդ ոլորտում լիազորված մարմնի հետ համաձայնեցված: Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառման կանոնները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սակայն հրդեհի մասին ակտի կազմումը, ինչպես նաև հրդեհների և դրանց հետևանքների հաշվառումը չի կարող իրականացվել այն մարմնի կողմից այս պահին՝ Տեսչական մարմին, որը չի տիրապետում պահանջվող տեղեկատվությանը: Ավելին, ներկայումս հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառումն իրականացվում է համաձայն ՀՀ

կառավարությանն առընթեր Արտակարգ իրավիճակների վարչության պետի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի «Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառման կանոնները հաստատելու մասին» N 978-Ն հրամանի, այլ ոչ թե՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կանոնների համաձայն, ինչը օրենքի պահանջի խախտում է:

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սակայն մինչ օրս արտադրական վտանգավոր օբյեկտները դասակարգված չեն, և վտանգավորության տարբեր աստիճանի օբյեկտների օրենքի խախտումով շահագործման դեպքում պատասխանատվության նույն միջոցի կիրառումն անհամաչափ վարչարարության ռիսկ է առաջացնում: Միաժամանակ ակնհայտ է, որ սառնարանի տեխնածին վթարի այդ թվում՝ հրդեհի կամ պայթյունի վտանգը և հնարավոր հետևանքները համեմատելի չեն բենզալցակայանի կամ պայթյունավտանգ նյութերի պահեստի անգամ՝ փոքր վթարի հետ:
- Համակարգային խնդիր է հակահրդեհային միջտարածությունների ապահովման պահանջը, հատկապես՝ բենզալցակայանների, վառելիքի լցավորման կայանների դեպքում: Այն դեպքերում, երբ գործող ԱԳԼՃԿ-ում կամ հեղուկ վառելիքի լցավորման կայանում պահանջվող միջտարածությունը պահպանված չէ և չկա նաև հնարավորություն խնդիրը շտկելու (տարածքային առումով), անհրաժեշտ է մշակել լրացուցիչ միջոցներ, նախատեսել լրացուցիչ ինժեներատեխնիկական և ամրացման աշխատանքներով անվտանգության ապահովման լուծումներ, օրինակ՝ պատերը հաստացնել, բարձրացնել, հատուկ տեխնիկական սարքավորումներով հագեցնել:
- Համաձայն «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի թիվ 182-Ն որոշման հավելվածի 92-րդ կետի՝ 100 կգ սելիտրան համարվում է արտադրական վտանգավոր

օբյեկտ, ուստի ենթակա է արտադրական վտանգավոր օբյեկտների այսուհետ՝ ԱՎՕ ռեեստրում գրանցման, իսկ չգրանցելու դեպքում սահմանված է վարչական պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով տուգանք, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Հրդեհային անվտանգության ոլորտը համակարգող ՌԴ նորմատիվի Федеральный закон от 21.07.1997 N 116-ФЗ (ред. от 11.06.2021) "О промышленной безопасности опасных производственных объектов" համաձայն՝ պարարտանյութ սելիտրան ԱՎՕ է համարվում 200 տոննա չափը գերազանցելու դեպքում:

- ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ Տեսչական մարմնի լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, որը ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:
- ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ են հաստատված ստուգաթերթեր և ռիսկի հաշվարկի մեթոդաբանություն: Տվյալ գործառույթի կատարումը հնարավոր է ապահովել անձնակազմի վերապատրաստման և նոր հաստիքներով համալրման պարագայում:

2. Տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներին զուգահեռ Տեսչական մարմինն իրականացնում է նպատակային **հրդեհատեխնիկական հետազոտություններ**

այսուհետ՝ հետազոտություն ըստ գործունեության ոլորտների: Մասնավորապես, 2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) իրականացվել է 63 հետազոտություն: Արդյունքում 7 ԲՈՒՀ-երում խախտումներ չեն բացահայտվել, իսկ 56 ԲՈՒՀ-երում արձանագրվել է ընդհանուր առմամբ 438 խախտում: 2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում հետազոտություններ են իրականացվել պատկերասրահներում, թանգարաններում և թատրոններում: Հաստատությունների տնօրեններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն և տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր՝ բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար:
Հետազոտությունները հնարավորություն են տալիս ոչ միայն կատարել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ, այլև՝ համալրել Տեսչական մարմնի հրդեհային ռիսկի հաշվարկի էլեկտրոնային շտեմարանը, որի շնորհիվ Տեսչական մարմնի ռեսուրսը նպատակաուղղում է դեպի առավել վտանգավոր օբյեկտներ:

Դինամիկ քարտեզի հնարավորությամբ DATABASE MANAGEMENT SYSTEM ծրագիրն էապես կթեթևացնի Տեսչական մարմնի կողմից կատարվող աշխատանքը՝ միաժամանակ բացառելով կրկնվող տեղեկատվության մուտքագրումը և ռիսկի հաշվարկի սուբյեկտիվությունը, շահերի բախումը: Ծրագրին կից դինամիկ քարտեզը հնարավորություն կտա տեսնելու նախագծված (գործող) օբյեկտի տեղակայումն իրեն շրջապատող այլ օբյեկտների նկատմամբ, դրանց միջև հակահրդեհային միջտարածությունները, կառույցների հրդեհավտանգավորության աստիճանը: Տվյալ ծրագիրը հնարավոր է կյանքի կոչել միայն համապատասխան ֆինանսավորման դեպքում:

3.Հաշվի առնելով հասարակության իրազեկված լինելու կարևորությունը՝ 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմինն իր **պաշտոնական կայքում**

տեղադրել է 27 հոդված, կազմակերպել է 72 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով, իրականացրել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 37 ելույթ տարբեր հեռուստատեսային և ռադիո ալիքներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 435 լրատվական հրապարակում:

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու, այդ թվում նաև վերը նշված խնդիրները կարգավորելու համար առաջնային է **օրենսդրական փոփոխությունների** իրականացումը: Մասնավորապես,

- ✓ Տեսչական մարմինների աշխատանքները համակարգող գրասենյակ (այսուհետ՝ Գրասենյակ) ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ, որը հնարավորություն կընձեռնի Տեսչական մարմնին ստուգումներ կազմակերպել գործող օբյեկտում՝ անկախ այն փաստից, թե ով է տնտեսավարող սուբյեկտը, ինչ կարգավիճակ ունի ըստ Ի-ռեգիստրի կամ ինչ պայմանագրեր ունի այլ տնտեսավարող սուբյեկտների հետ:
- ✓ Գրասենյակ է ներկայացվել առաջարկ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 10-րդ հոդվածում փոփոխություն կատարելու և ՀՀ կառավարությանն առընթեր Արտակարգ իրավիճակների վարչության պետի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի «Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառման կանոնները հաստատելու մասին» N 978-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչել վերաբերյալ:
- ✓ Վերահսկողությունը դեպի առավել վտանգավոր օբյեկտներ նպատակաուղղելու, մարդկային ռեսուրսը և ժամանակն արդյունավետ բաշխելու համար կառաջարկվի Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենքում սահմանել արտադրական վտանգավոր օբյեկտների վտանգավորության

տարանջատում, ըստ այդմ որոշել նաև պատժաչափերը՝ տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջները խախտելու համար։

- ✓ Անհրաժեշտ է վերանայել ինչպես ԱԳԼՃԿ-ներին ու բենզալցակայաններին պատկանող շենք-շինությունների, այնպես էլ դրանց չպատկանող այլ շենքերի միջև նորմերով պահանջվող միջտարածությունների չափը, ուսումնասիրելով զարգացած եվրոպական երկրների նորմատիվները նշված ոլորտում, թարմացնել ՀՀ-ում գործող նորմերը։
- ✓ Անհրաժեշտ է վերանայել «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի թիվ 182-Ն նորմի պահանջը՝ սահմանելով այլ չափաքանակ։ Միաժամանակ թիվ 182-Ն որոշման մեջ անհրաժեշտ է ավելացնել որոշ վտանգավոր քիմիական նյութեր, մասնավորապես՝ էթիլային սպիրտի առկայությունը, և սահմանել չափաքանակները։
- ✓ Տիեզերական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Տեսչական մարմնի կողմից մշակվել և Համակարգող գրասենյակ է ներկայացվել համապատասխան ստուգաթերթ։
- ✓ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով կներկայացվի առաջարկ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու

մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

2.2024 թվականի ընթացքում նախատեսվում է **հրդեհատեխնիկական հետազոտություններ** իրականացնել հետևյալ ոլորտներում.

- ✓ երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով Տեսչական մարմնի մասնագետների կողմից ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքներ են իրականացվում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում.
- ✓ մինչև մայիսի 1-ը նախատեսվում է իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով.
- ✓ 2-րդ կիսամյակի ընթացքում հետազոտություններ կիրականացվեն արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված այն ԲԼԿ-ներում, ԳԼԿ-ներում, հրդեհա- և հրդեհապայթունավտանգ նյութերի պահեստներում, որտեղ մինչ օրս որևէ վերահսկողական միջոցառում չի իրականացվել.
- ✓ առաջին եռամսյակի ընթացքում նախատեսվում է հետազոտել շուրջօրյա գործունեություն իրականացնող սոցիալական նշանակության օբյեկտները՝ ծերանոց, մանկատուն և այլն:

3. Վերահսկողության ոլորտներում հանրության **իրազեկվածության մակարդակի** շարունակական բարձրացման նպատակով օգտագործվում են տպագիր և առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները: 2024 թվականի ընթացքում նախատեսվում է վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի առնվազն 8 հաղորդագրությունների տարածում: Անտառային հրդեհների առաջացումը կանխելու նպատակով՝ Տեսչական

մարմնի կողմից կմշակվեն և կհրապարակվեն իրազեկող բուկլետներ/հուշաթերթիկներ, իսկ ԲԼԿ-ներում՝ հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմերի պահանջների վերաբերյալ, կպատրաստվի և կհրապարակվի իրազեկող տեսանյութ։ Միաժամանակ կշարունակվի անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը տնտեսավարողներին և քաղաքացիներին, կկազմակերպվեն իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ։

2.Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ

2.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 52 պլանային ստուգում: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 1064 խախտում, որոնց վերացման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր: Նախորդ տարիներին տրված կարգադրագրերի կատարման ընթացքը վերահսկելու նպատակով նշված ժամանակահատվածում իրականացվել է 60 վերստուգում, որոնց արդյունքում պարզվել է, որ նախկինում արձանագրված խախտումներից 401-ը վերացվել են:

Միաժամանակ ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2023 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել է 1352 տեխնիկական ստուգում, որից 869-ը՝ (64.3%) էլեկտրաէներգետիկական և 483-ը՝ (35.7%) գազամատակարարման համակարգերում: Արդյունքում տրվել է 1023 գործարկման եզրակացություն, իսկ թվով 329 տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են: Ս.թ. 9 ամիսների ընթացքում էներգատեղակայանքներում գրանցվել է 15 մահվան ելքով պատահար: Հանրությունից ստացվել է 61 բողոք, որից 6-ը՝ թեժ գծով: Հիմնավոր բողոքների 80 տոկոսը լուծում է ստացել:

2024 թվականի գործունեության ծրագիրը կազմված է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում իրականացրած տեխնիկական ստուգումների, էներգահամակարգում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների արդյունքում բացահայտված խախտումների պատճառների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց պատկանող էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացրած տեղեկատվությունների վերլուծությունների, հանրությունից ստացված բողոքների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված հետևյալ խնդիրների և ռիսկերի հիման վրա.

1. **օրենսդրական կարգավորումների մասով՝**

➢ առկա է անհամապատասխանություն Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքների միջև, ինչն իրավական խոչընդոտ է ստեղծում պատշաճ ստուգումներ իրականացնելու գործընթացում. մասնավորապես՝ առաջին օրենքով նախատեսվում է ստուգումներ անցկացնել օբյեկտներում, իսկ երկրորդով՝ միայն սուբյեկտներում:

➢ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» թիվ 739-Ն և «Միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» 5 հոկտեմբերի 2006 թվականի թիվ 1423-Ն որոշումներով սահմանված որոշ գործառույթների իրականացման ժամանակ Տեսչական մարմինն առնչվում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող խնդրի, այն է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի

19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ հստակ դասակարգված չեն էներգատեղակայանքներն ըստ ռիսկայնության կատեգորիաների և, հետևաբար, հնարավոր չի պարզել ինչպիսի փորձաքննության են ենթակա նախագծերը:

- «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի թիվ 580-Ն որոշման մեջ առկա են որոշակի պահանջներ, որոնք տարընթերցման և տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս, ինչը խոչընդոտում է պատահարների մասնագիտական քննություն իրականացնելու գործընթացը:
- Վերականգնող էներգիայի, այդ թվում՝ արևային կայանների, աննախադեպ աճը կարևոր դեր է կատարում ՀՀ էներգետիկ անվտանգության բնագավառում, սակայն արդեն փաստացի տեղակայված կայանների հզորությունը որոշակի խնդիրներ է ստեղծում էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների կարգավորման ժամանակ՝ ՀՀ-ում տվյալ բնագավառը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի (ԳՕՍՏ-եր, նախագծային, շահագործման, կարգաբերման, կարգավարական և այլն) բացակայության պատճառով:
- Քաղաքացիներից, էներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող անձանցից և սպառողներից ստացված բողոքների զգալի մասն առնչվում է էներգետիկայի բնագավառի էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման գծերի և այլն) անվտանգության գոտիների խախտումների հետ:

Վերլուծությունից պարզվել է, որ արձանագրված խախտումների պատճառը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող

հողամասերի վրա՝ անվտանգության գոտիներում, ինքնակամ կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված թույտվությունների հիման վրա էներգատեղակայանքների, շենքերի և շինությունների կառուցումն է, ինչը կարող է հանգեցնել մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրի վնասի պատճառման դեպքերի:

- էներգետիկայի բնագավառը կարգավորող որոշ ԳՈՍՏ-երի բացակայությունը տնտեսվարող սուբյեկտների կողմից տարաբնույթ մեկնաբանությունների, իսկ առանձին դեպքերում՝ նաև շահարկման տեղիք է տալիս:
- Հայաստանի էլեկտրական ցանցերի սեփականաշնորհման ժամանակ որոշակի 6, 10, և 0.4 կՎ էլեկտրատեղակայանքներ չեն ներառվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում, ինչի հետևանքով ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց տեխնիկական վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Իրավական ակտերով սահմանված կարգով չեն իրականացվում դրանց տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքները, ինչը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին, ինպես նաև պատճառ են հանդիսացում հոսանքահարման մահացու ելքով պատահարների:

2.վերահսկողական միջոցառումների մասով՝

- վերջին ժամանակաշրջանում էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով կատարած տեխնիկական զննումների արդյունքում արձանագրվում են դեպքեր, երբ տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղադրվում են ոչ գործարանային արտադրության, ինքնաշեն լրակազմ տրանսֆորմատորային ենթակայաններ (ԼՏԵ)

և այլ էլեկտրատեղակայանքներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ հավաստված չեն, չունեն արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագրեր, չեն համապատասխանում էլեկտրատեղակայանքների շահագործման և անվտանգության կանոններին և այլ իրավական ակտերի պահանջներին, ինչը կարող է պատճառ հանդիսանալ հոսանքահարման մահացու ելքով պատահարների:

3.Հաշվի առնելով հասարակության իրազեկված լինելու կարևորությունը՝ 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմինն իր **պաշտոնական կայքում** տեղադրել է 2 հոդված, կազմակերպել է 1 հարցազրույց առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 4 լրատվական հրապարակում:

4. մասնագետների քանակի և որակի մասով՝

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից էներգետիկայի և էներգասպառման ոլորտի տեխնիկական կանոնակարգերը փոխարինվեցին նորերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված իրավական ակտերում ներառված են ժամանակակից տեխնոլոգիական ու ավտոմատ համակարգերով հագեցած էներգատեղակայանքներին և դրանց շահագործման անվտանգության կանոններին ներկայացվող պահանջներ՝ անհրաժեշտություն է առաջացել վերապատրաստելու Տեսչական մարմնի էներգետիկայի և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող մասնագետներին:

Մինչև 110 կՎ լարման (0,22-35կՎ) էլեկտրաէներգետիկական և ցածր ճնշման գազի համակարգերում (այդ թվում ներտնային գազասպառման) մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին վնաս պատճառած պատահարների, ինչպես նաև

էներգահամակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշների պահպանման նպատակով 110 կՎ և բարձր լարման, գազամատակարարման համակարգում՝ գազի միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերլուծության օրենսդրությամբ վերապահված գործառույթը Տեսչական մարմնի կողմից չի իրականացվում համապատասխան մասնագետների և հաստիքների բացակայության պատճառով, որի արդյունքում խախտումները հայտնաբերելու նպատակով ստուգումներ չեն իրականացվում 0,22-35կՎ լարման և ցածր ճնշման գազի համակարգերում, որտեղ տեղի են ունենում պատահարների (այդ թվում մահացու ելքով) 90%-ից ավելին։

Ոլորտային մասնագիտացման որակավորում ունեցող մասնագետների, թափուր հաստիքների չհամալրման, ինչպես նաև առկա թվաքանակի անբավարարության պայմաններում անհնար է դառնում սահմանված կարգով համալրել Տեսչական մարմնին օրենքով վերապավված գործառույթների շրջանակներում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով իրականացվող համակարգային և մահացու ելքով պատահարների մասնագիտական քննություններն իրականացնող հանձնաժողովների կազմերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող պատահարների մասնագիտական քննությունն իրականացնող հանձնաժողովների կազմերում տեսչական մարմնի մասնագետների ներգրավումը։ Արդյունքում պատահարների մասնագիտական քննությունները պատշաճ չեն իրականացվում, ինչի հետևանքով լիարժեքորեն չեն բացահայտվում տեղի ունեցած պատահարների պատճառները։

Գործարկման եզրակացությունների մեծ ծավալի և մասնագիտական ռեսուրսի անբավարար լինելու պատճառով էներգատեղակայանքների գործարկման եզրակացությունները ոչ միշտ են տրամադրվում ՀՀ կառավարության որոշումներով սահմանված ժամկետներում, ինչը երբեմն առաջացնում է տնտեսվարող սուբյեկտների արդարացի բողոքը։

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

1.Բացահայտված խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտություն կա կատարել մի շարք **օրենսդրական փոփոխություններ:** Մասնավորապես,

- ✓ Գրասենյակ կներկայացվի առաջարկ Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքների ներդաշնակեցման անհրաժեշտության վերաբերյալ:
- ✓ Էներգատեղակայանքներն ըստ ռիսկայնության կատեգորիաների դասակարգումը հստակեցնելու նպատակով կներկայացվի առաջարկ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:
- ✓ Ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնին կներկայացվի առաջարկ «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի թիվ 580-Ն որոշման մեջ որոշակի պահանջների վերաբերյալ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
- ✓ Վերականգնող էներգիայի, այդ թվում՝ արևային էներգետիկայի, խնդիրը հնարավոր է լուծել տվյալ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի մշակման և ներդման շնորհիվ: Տեսչական մարմինը ներգրավված է վերոգրյալ խնդրի կարգավորման նպատակով նախաձեռնված իրավական նորմերի մշակման գործընթացին:
- ✓ Անվտանգության գոտիների խախտումների հետևանքով պատահարների առաջացումը կանխարգելելու նպատակով առաջարկություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ «Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգ շահագործումն ապահովող

միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 6-ի թիվ 1102-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ: Գործընթացն աշխատանքային քննարկման փուլում է:

- ✓ էներգետիկայի բնագավառը կարգավորող որոշ պահանջների բացակայության հետևանքով առաջացող ռիսկերը նվազեցնելու և վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Լիազոր մարմնին կներկայացվի առաջարկ՝ առաջացած իրավական բացը կարգավորելու անհրաժեշտության վերաբերյալ:
- ✓ Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում չներառված, սակայն ընկերության կողմից փաստացի շահագործվող էլեկտրատեղակայանքների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են իրավական կարգավորումներ:

2.**Վերահսկողական միջոցառումների** ընթացքում բացահայտված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.

- ✓ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնաշեն լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանների և այլ էներգատեղակայանքների հիմնախնդիրը դրանց անվտանգ շահագործման ռիսկեր է պարունակում, անհրաժեշտ է այն քննարկել բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների հետ՝ համապարփակ լուծում գտնելու նպատակով:

3. Վերահսկողության ոլորտներում հանրության **իրազեկվածության մակարդակի** շարունակական բարձրացման նպատակով օգտագործվում են տպագիր և առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները: 2024 թվականի ընթացքում նախատեսվում է վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի առնվազն 4 հաղորդագրությունների

տարածում: Միաժամանակ կշարունակվի անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը տնտեսավարողներին և քաղաքացիներին, կկազմակերպվեն իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ:

4. մասնագետների քանակի և որակի մասով՝

ՀՀ-ում էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում առկա ռիսկերը կառավարելու, օրենսդրությամբ Տեսչական մարմնին վերապահված գործառույթների իրականացնելու նպատակով անհրաժեշտ է առկա անձնակազմը համալրել որակյալ մասնագետներով, ինչպես նաև նախատեսել հաստիքների ավելացում: Միաժամանակ, էներգետիկայի բնագավառում զարգացման ժամանակակից տենդենցների մասին տեղեկացված լինելու, վերահսկողության առավել արդյունավետ տեսակներին և գործիքներին ծանոթանալու և տիրապետելու նպատակով՝ անհրաժեշտ է կազմակերպել վերապատրաստումներ միջազգային մասնագետների կողմից: Իսկ հանրապետության մակարդակով որոշակի մասնագիտական վերապատրաստում ապահովելու նպատակով Տեսչական մարմնի կողմից նախատեսվում է համագործակցություն համապատասխան ուսումնական հաստատությունների հետ ստորագրած Հուշագրի շրջանակում:

3. Տրանսպորտի բնագավառ

3.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 19 պլանային ստուգում: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 71 խախտում, որոնց վերացման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր: Նախորդող ժամանակահատվածում տրված կարգադրագրերի կատարման ընթացքը վերահսկելու նպատակով նշված ժամանակահատվածում իրականացվել է 11 վերստուգում, ինչի արդյունքում արձանագրվել է խախտումների նվազում 54 տոկոսով: «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/ վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, բեռնափոխադրումների, թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների, գազաբալոնների տեղադրման/վկայագրման կայանների գործունեության նկատմամբ 42536 վերահսկողական միջոցառում: Կազմվել է վերահսկողության արդյունքների ամփոփման 3535 արձանագրություն: Հանրությունից ստացվել է 87 բողոք, որից 53-ը՝ թեժ գծով: Հիմնավոր բողոքների 94 տոկոսն արդեն լուծում է ստացել:

2024 թվականի գործունեության ծրագիրն ընդգրկում է նախորդ տարիների ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում կատարված հսկողական, վերահսկողական միջոցառումների, այդ թվում ստուգումների շնորհիվ բացահայտված հետևյալ ռիսկերի հետևողական նվազեցմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես.

1.օրենսդրական կարգավորումների մասով՝

- Ավտոբուսային ոչ կանոնավոր միջպետական փոխադրումների կազմակերպումն իրականացվում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, իսկ պետական տուրք գանձվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 53 և 54 կետերին համապատասխան: Տեսչական մարմնի կողմից ոչ կանոնավոր միջպետական ուղևորափոխադրումների նկատմամբ վերահսկողական գործառույթ չի իրականացվում, քանի որ շուրջօրյա հսկողության անհրաժեշտություն է առաջանում, որը Տեսչականն մարմնի մասնագետի համար սահմանված աշխատանքային ռեժիմի սահմաններում կատարել հնարավոր չի:
- Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խախտումները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:
- «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 16-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1604-Ն որոշմամբ՝ ՀՀ տարածքում գործող ավտոկայարաններում, ավտոկայաններում և ենթակարգավարական կետերում միջպետական, միջմարզային, ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սպասարկման գործընթացի ապահովման, ուղետոմսերի վաճառքի և երթակարգավարական ծառայությունների մատուցման կազմակերպման գործառույթը վերապահված է Հայավտոկայարան ՓԲ ընկերությանը: Համաձայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ միջպետական երթուղիների ուղևորների

տոմսավորումը պետք է իրականացվի բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող կազմակերպությունների տոմսարկղերից, որոնց նկատմամբ Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել վերահսկողական գործառույթ՝ գործիքակազմի բացակայության պատճառով, օրինակ՝ Տեսչական մարմինը հսկիչ գնման իրավասություն չունի:

- 2023 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում կազմվել է տրանսպորտի բնագավառում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 263 արձանագրություն, սակայն էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով:
- Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ: Տվյալ ոլորտում վերահսկողական միջոցառումներ չեն իրականացվում օրենսդրական բացի պատճառով:
- Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերն ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի 1565-Ն որոշման Հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տեխնիկական զննման կայան պետք է կահավորված լինի թվային տեսախցիկով: Նույն որոշման 15-րդ կետը պահանջում է տեսաձայնագրել տեխնիկական զննության

իրականացման գործընթացը, իսկ ձայնագրությունները՝ պահպանել առնվազն մեկ տարի: Սակայն իրականում ոչ բոլոր տնտեսավարողներն են կատարում որոշման պահանջները, իսկ օրենսդրությունը չի նախատեսում վարչական պատասխանատվություն վերը նշված պահանջները չկատարելու համար:

2.վերահսկողական միջոցառումների մասով՝

Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցմամբ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության տեսակետից: Տեսչական մարմինը վերահսկողական միջոցառումներն իրականացնում է 2 անշարժ և 1 շարժական կշեռքների շնորհիվ: 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 38430 կշռում, որի արդյունքում կազմվել են տրանսպորտի բնագավառում վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ 2698 արձանագրություն, սակայն գերբեռնված տրանսպորտային միջոցները շրջանցում են կշռման վայրերը զարտուղի ճանապարհներով:

3.Հաշվի առնելով հասարակության իրազեկված լինելու կարևորությունը՝ 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմինն իր **պաշտոնական կայքում** տեղադրել է 8 հոդված, կազմակերպել 2 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 3 ելույթ տարբեր հեռուստատեսային և ռադիո ալիքներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 140 լրատվական հրապարակում:

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը: Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

1.**օրենսդրական դաշտի** կարգավորմանն ուղղված առաջարկությունների ներկայացում: Մասնավորապես.

- ✓ միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների նկատմամբ վերահսկողական գործառույթն իրականացնելու համար արդյունավետ կլիներ այն կատարել պետական սահմանային անցման կետերում ամենօրյա ստուգումների միջոցով, սակայն Տեսչական մարմինը նման իրավասություն չունի: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Գրասենյակ է ներկայացվել օրենսդրական փոփոխության առաջարկ, որի ընդունման արդյունքում պետական տուրքի գանձման հետ կապված գործառույթը կվերապահվի ՀՀ ՊԵԿ-ին:
- ✓ Ապօրինի տաքսամոտորային ուղևորափոխադրումների վերահսկողությունը հնարավոր է իրականացնել միայն հսկիչ գնում կատարելով կամ քաղաքականություն մշակող մարմնի կողմից միասնական առցանց շտեմարան ստեղծելու պարագայում, որին Տեսչական մարմինը կունենա հասանելիություն:
- ✓ Ավտոկայարանների և ավտոկայանների կողմից «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 15 հոդվածի և 16-րդ հոդվածի 3.1 կետի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Տեսչական մարմինը Գրասենյակ է ներկայացրել առաջարկ՝ ՎԻՎ օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Սակայն անօրինական գործող տոմսարկղերի գործունեության դադարեցման համար առավել արդյունավետ կլինի առցանց տոմսավարման համակարգի ստեղծումը, որին Տեսչական մարմինը կունենա հասանելիություն: Դրա բացակայության

պայմաններում, տոմսերի ապօրինի վաճառքի խնդիրը հնարավոր է լուծել ՊԵԿ-ի հետ փոխօգնության հայտի հիման վրա, որով կնախատեսվի ՊԵԿ-ի կողմից բացահայտված խախտումներով Տեսչական մարմնին կողմից վարչական վարույթների իրականացում:

- ✓ Կանոնավոր երթուղիների անվտանգ գործունեությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Գրասենյակ ներկայացնել առաջարկ՝ ՎԻՎ օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տուգանքների չափերի բարձրացման վերաբերյալ:
- ✓ Երկաթուղային տրանսպորտի նկատմամբ վերահսկողությունը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների և համապատասխան մասնագետների համալրման դեպքում:
- ✓ Տեխնիկական զննության կայաններում Տեսչական մարմնի մասնագետների կողմից տեսաձայնագրությունների դիտման և արդյունքում համապատասխան վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ է ՎԻՎՕ-ում կատարել լրացում՝ սահմանելով տուգանք տեսաձայնագրությունները չպահպանելու կամ Տեսչական մարմնի մասնագետների պահանջով չներկայացնելու համար:

Տրանսպորտի բնագավառի տարաբնույթ խնդիրների այդ թվում՝ Ծրագրում ներառված լուծումը նախատեսված է «Տրանսպորտի ոլորտում պետական վերահսկողության մասին» օրենքի նախագծով, որը Տեսչական մարմնի կողմից մշակվել և ներկայացվել է Գրասենյակ:

2. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման խնդրի առավել արդյունավետ լուծումը հնարավոր է ապահովել կշռման նոր համակարգի ներդրմամբ: Զուգահեռաբար անհրաժեշտ է տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ, ձեռք բերել ևս 4 շարժական կշեռք՝ այլընտրանքային ճանապարհների վրա վերահսկողություն իրականացնելու համար,

իսկ Երևան քաղաք մուտք գործող 4 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրել անշարժ կշեռքներ։

3. Վերահսկողության ոլորտներում հանրության **իրազեկվածության մակարդակի** շարունակական բարձրացման նպատակով օգտագործվում են տպագիր և առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները։ 2024 թվականի ընթացքում նախատեսվում է վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի առնվազն 8 հաղորդագրությունների տարածում։

4. Քաղաքաշինության բնագավառ

4.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 128 պլանային ստուգում, 11՝ ոչ պլանային ստուգում, 1՝ վերստուգում: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 375 խախտում, որոնց վերացման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր: Նշված ժամանակահատվածում կատարվել է 902 դիտարկում, որոնցից 327-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 2112 օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին: Ավարտական ակտերի վերաբերյալ տրամադրվել է 1102 դրական և 949 բացասական եզրակացություն Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում ՀՀ ամբողջ տարածքում հայտնաբերվել է 93 ինքնակամ կառույց:

1.Տեսչական մարմինն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հաճախակի առնչվում է կարգավորող **օրենսդրության կիրարկմանը** խոչընդոտող և պահանջները հակասական դարձնող հանգամանքների, որոնք դժվարացնում են Տեսչական մարմնի օրենքով սահմանված խնդիրների և նպատակների իրագործումը: Մասնավորապես,

- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից քաղաքաշինական օբյեկտներում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է այն փաստը, որ համայնքների կողմից քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրվում են ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով, ինչի հետևանքով կառուցապատողը հետագայում՝ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման հանձնելիս, հայտնվում է անելանելի վիճակում: Այն է՝ կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի վերաբերյալ ՀՀ կառավարության 2015 թվականի

մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված պահանջների խախտումով քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման հետևանքով Տեսչական մարմնի կողմից արձանագրվում են չլիցենզավորված գործունեության դեպքեր, որի համար կառուցապատողի նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ, ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի կողմից արձանագրվում են նաև մատչելիությունը չապահովելու հետ կապված խնդիրներ, որի համար կառուցապատողը ևս ենթարկվում է վարչական պատասխանատվության: Սակայն վարչական պատասխանատվության կիրառման արդյունքում խնդիրները չեն վերանում, և կառուցապատողի համար համայնքի կողմից թույլ տրված իրավախախտման պատճառով առաջանում են լուրջ խոչընդոտներ՝ ավարտական ակտը ձևակերպելու ժամանակ:

- Ստուգումների ընթացքում բացահայտվում են նաև կապալառու կազմակերպությունների կողմից թույլ տրված կոնստրուկտիվ բնույթի կոպիտ խախտումներ, որոնք հետագայում կարող են ազդել կառուցված շենք շինությունների սեյսմակայունության վրա: Սակայն վարչական վարույթի ընթացքում շինության սեփականատիրոջ կամ կապալառու կազմակերպության կողմից տրամադրվում է դրական փարձագիտական եզրակացություն այն մասին, որ կապալառու կազմակերպության կողմից թույլ տրված խախտումը չի ազդում կառուցված կառույցի սեյսմակայունության և հուսալիության վրա: Փաստորեն առաջանում է կրկնակի փորձաքննության անհրաժեշտություն:

- Հանրությունից ստացված բողոքների զգալի մասը վերաբերում է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի բազմաբնակարան շենքերում և հողամասերում իրականացվող ինքնակամ շինարարական աշխատանքներին, որոնց չափորոշիչները՝ կոնստրուկտիվ համակարգը, միջտարածությունները չեն համապատասխանում իրավական ակտերով սահմանված պահանջներին, սակայն համայնքի ղեկավարները քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմաններում կամ բազմաբնակարան շենքերում իրականացվող ինքնակամ շինարարության նկատմամբ կիրառում են միայն վարչական

պատասխանատվության միջոցներ՝ առանց ինքնակամ աշխատանքների հետևանքները վերացնելու։ Մինչդեռ բազմաբնակարան շենքերում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կոնստրուկտիվ բնույթի միջամտությունները կարող են հանգեցնել անդառնալի հետևանքների։ Վերահսկողական միջոցառումների արդյունքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվել է, որ քաղաքացիները, անտեսելով օրենքը և օգտվելով համայնքի ղեկավարների անգործությունից, շարունակում են իրականացնել ինքնակամ շինարարություն և միայն վարչական տուգանք վճարելով պահպանում են անօրինական կառույցները։ Ապօրինի կառուցապատումը ոտնահարում է այլ քաղաքացիների շահերը, խոչընդոտում նրանց կառուցապատման իրավունքին։ Ավելին, այդ կառույցների մասով պետության կողմից գույքահարկ չի գանձվում, դրանք շարունակում են շահագործվել առանց իրավական հիմքի՝ պետությանը վնաս հասցնելով թե անվտանգության, թե ֆինանսական տեսանկյուններից։

- Վերահսկողական աշխատանքի արդյունքում պարզվել է, որ համայնքներում դեռ կան օբյեկտներ, որոնք շահագործվում են առանց հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար մատչելիությունն ապահովելու և առանց հրդեհային անվտանգության նորմերը պահպանելու։
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման մեջ հստակ չեն ձևակերպված քաղաքաշինական օբյեկտների ռիսկայնության աստիճանների չափորոշիչները, հատկապես՝ 3-րդ կատեգորիայի օբյեկտների բնութագրիչները, ինչը խոչընդոտում է համաչափ վարչարարության իրականացմանը։
- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 173-րդ կետի՝ կառուցվող (այդ թվում՝ վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, արդիականացվող, ընդլայնվող) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի շինարարական աշխատանքների ավարտը՝ կառուցապատողի հայեցողությամբ, փաստագրվում է ավարտական ակտով՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2 ձևի հաստատված նախագծով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից

ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնվելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո: Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի շինարարական աշխատանքների ավարտն ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2-2 ձևի:

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է իրավասու մարմնին՝ համաձայն N 5 հավելվածի N 3-3-3 ձևի, շահագործման թույլտվության ձևակերպման համար: Դիմումին կից ներկայացվում են՝

1) մատակարար կազմակերպությունների մասնագիտական դրական եզրակացությունները.

2) ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքների փորձարկումն

իրականացրած կազմակերպությունների դրական եզրակացությունները.

3) կառուցապատողի կամ նրա իրավահաջորդի, գրավոր հայտարարությունը շինարարական օբյեկտը շահագործման պատրաստ լինելու վերաբերյալ.

4) շահագործման թույլտվության ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (կամ սույն կարգի 98-րդ կետով) սահմանված կարգով տեղական վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտական ակտը հիմք է կառուցված օբյեկտի և դրա կազմում ստորաբաժանված գույքային միավորների (բնակարաններ կամ ոչ բնակելի տարածքներ) նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար՝ առանց շահագործման իրավունքի: Շահագործման թույլտվության ձևակերպման ժամանակ բազմաբնակարան շենքում հրդեհային անվտանգության համար պահանջվող միջոցառումների բացակայությունը բազմաբնակարան շենքի հետագա շահագործման ժամանակ կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների:

- Քաղաքաշինության բնագավառում Տեսչական մարմնին վերահսկողական գործընթացում վերապահված է միայն ստուգման իրականացում, սակայն որոշ դեպքերում, օրինակ, երբ բացակայում են համաձայնեցված քաղաքաշինական

փաստաթղթեր և շինարարության թույլտվություն, ինչպես նաև քաղաքացիներից ստացվող բողոքներին օպերատիվ արձագարքելու համար, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել դիտարկում կամ տեղազննություն։

- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման հավելված 1-ի 149-րդ կետի՝ տարածքային բաժնի և շահագրգիռ պետական մարմինների՝ մասնակցությունն ընդունող հանձնաժողովի աշխատանքին համարվում է այդ մարմինների կողմից օրենքով իրենց լիազորությունների սահմաններում կատարված, ավարտված շինարարական օբյեկտի վերջնական ստուգում, և պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքի դրույթներին համահունչ: 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1102 դրական և 949 բացասական եզրակացություն։ Հաշվի առնելով ավարտված շինարարական օբյեկտների հանձնաժողովին մասնակցությունների քանակը և ստուգման գործընթացի ավելորդ փաստաթղթային ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև Տեսչական մարմնի քաղաքաշինական բնագավառի մասնագետների փաստացի քանակը՝ հնարավոր չէ ապահովել «վերջնական ստուգումների» կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքի տրամաբանության մեջ։
- Սուբվենցիոն և պետական ծրագրերի կատարման նկատմամբ վերահսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել է, որ տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինական սուբյեկտների գործունեությունը կրում է ձևական բնույթ։ Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովին ներկայացվում են ծածկված աշխատանքների միջանկյալ ակտեր, որտեղ արձանագրված են աշխատանքների քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված պահանջներին համապատասխանելու մասին, սակայն կատարված աշխատանքների իրական վիճակը չի համապատասխանում դրան։

2.Հաշվի առնելով հասարակության իրազեկված լինելու կարևորությունը՝ 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմինն իր **պաշտոնական կայքում** տեղադրել է 6 հոդված, կազմակերպել 5 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 7 ելույթ տարբեր հեռուստատեսությամբ և ռադիո ալիքներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 147 լրատվական հրապարակում:

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

1. Տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունն ապահովելու, այդ թվում նաև վերը նշված խնդիրները կարգավորելու համար առաջնային է **օրենսդրական փոփոխությունների** իրականացումը: Մասնավորապես,

- ✓ քաղաքաշինական փաստաթղթերի իրավաչափ համաձայնեցումը և տրամադրումը ապահովելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին թիվ 624 որոշման մեջ, ինչը հնարավորություն կընձեռնի Տեսչական մարմնին իրականացնել տեսչական ստուգումներ ՀՀ համայնքներում:
- ✓ Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերված բացահայտ խախտումներով համաձայնեցված քաղաքաշինական փաստաթղթերին տրված դրական փորձագիտական եզրակացությունը վիճարկելու նպատակով՝ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով Տեսչական մարմնին վերապահել կրկնակի փորձաքննություն նշանակելու իրավասություն:
- ✓ Քաղաքացիների կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում իրականացվող ինքնակամ շինարարությունը կանխելու նպատակով անհրաժեշտ է վերականգնել նախկինում նախատեսված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 157[12]-րդ հոդվածը, որը ինքնակամ շինարարության կասեցման, կանխարգելման ուղղությամբ օրենքով սահմանված

կարգով միջոցներ չձեռնարկելու համար վարչական պատասխանատվություն կսահմանի համայնքի ղեկավարի նկատմամբ։

- ✓ Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար մատչելիությունն ապահովելու նպատակով՝ կառաջարկվի օրենսդրության կարգավորման միջոցով լիցենզավորման ենթակա գործունեության համար իրավասու մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների գործընթացում շահագործվող հասարակական օբյեկտների համար սահմանվել չափորոշիչներ և պահանջներ, որոնք հնավորություն կտան որոշ չափով լուծել լիցենզավորման ենթակա գործունեության շրջանակներում քաղաքացիներին (հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին) անվտանգ և անխոչընդոտ օգտվել տնտեսվարողի կողմից մատուցվող ծառայություններից։
- ✓ Իրավաչափ վարչարարություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հստակեցնելով օբյեկտների ռիսկայնության կատեգորիաների չափորոշիչները։
- ✓ Անվտանգության ապահովման և/կամ քաղաքաշինական նորմերի խախտումներով շենքերի շահագործումը կանխելու համար անհրաժեշտ է օրեսդրական փոփոխությամբ Տեսչական մարմնի եզրակացությունը պարտադիր պահանջ սահմանել շահագործման թույլտվության տրամադրման ընթացակարգում։
- ✓ Վերահսկողության գործառույթի արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով կառաջարկվի օրենսդրական կարգավորումների միջոցով Տեսչական մարմնին վերապահել դիտարկման կամ տեղազննության գործառույթ։
- ✓ Հաշվի առնելով ավարտված շինարարական օբյեկտների հանձնաժողովին մասնակցությունների քանակը և ստուգման գործընթացի ավելորդ փաստաթղթային ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև Տեսչական մարմնի քաղաքաշինական բնագավառի մասնագետների փաստացի քանակը՝ առաջարկվում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման վերոնշյալ կետում «վերջնական ստուգում» եզրույթը փոխարինել «վերջնական տեղազննություն կամ դիտարկում» եզրույթով։

2. Վերահսկողության ոլորտներում հանրության **իրազեկվածության մակարդակի** շարունակական բարձրացման նպատակով օգտագործվում են տպագիր և առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները: 2024 թվականի ընթացքում նախատեսվում է վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի առնվազն 8 հաղորդագրությունների տարածում: ՀՀ-ում ինքնակամ շինարարությունը կանխելու նպատակով Տեսչական մարմնի կողմից կմշակվեն և կհրապարակվեն իրազեկող բուկլետներ/հուշաթերթիկներ, ավարտական ակտի տրամադրման կարգի վերաբերյալ՝ կպատրաստվի և կհրապարակվի իրազեկող տեսանյութ: Վերահսկողության ոլորտում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու նպատակով կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հետ: Միաժամանակ Տեսչական մարմինը կունենա իր մասնակցությունը քաղաքաշինական թույլտվությունների առցանց համակարգի ներդրման աշխատանքներին՝ աշխատանքային խմբի կազմում:

5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառ

5.1 Վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 6 պլանային, 11՝ ոչ պլանային ստուգում: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել է ընդհանուր առմամբ 247 խախտում:

1.2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև հանրությունից ստացված դիմումների, նախաքննական մարմինների որոշումների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային **օրենսդրության պահանջների պահպանման** համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, հրապարակային սակարկությունների գործընթացի, ինքնակամ կառույցների օրինականացման վարութային գործողությունների խախտումները, պաշտոնեական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, նույն եղանակով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման դեպքերը նվազել են, որպես այդպիսին 2023 թվականի դրությամբ բարձր ռիսկային չեն, սակայն շարունակում են մնալ որոշակի ռիսկայնության ուղղություններ: Բնագավառի կարևոր խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիր է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը, ինչն էական վնաս է հասցնում համայնքային և պետական շահերին:

2. իրազեկող աշխատանքների մասով՝

2023 թվականի 9 ամիսների ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 1 հոդված։ Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 15 լրատվական հրապարակում։

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

1. **Օրենսդրական դաշտի** կարգավորման շրջանակում

- ✓ պետական մարմինների կողմից քաղաքացիների բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործությունը կանխելու նպատակով կներկայացվի առաջարկ՝ իրավական դաշտում համապատասխան կարգավորումներ սահմանելու վերաբերյալ, մասնավորապես, նոր ՀՀ քրեական օրենսգրքում պաշտոնական լիազորություններն անցնելու հատուկ հանցակազմ նախատեսող արգելող նորմի նախատեսմանն ուղղված նախագիծ՝ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման նպատակով միջոցներ չձեռնարկելու համար։

2.Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ. վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել տպագիր, առցանց ԶԼՄ-ների, հեռուստաընկերությունների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, տնտեսավարողներին և քաղաքացիներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն։

Հավելված 1

6. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Վերջնա-ժամկետ
1	2	3	4	5	6
	ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
1	Սոցիալական նշանակության օբյեկտներում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	1. Հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում 2. Բազավորման աշխատանքների իրականացում 3. Հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում 4. Բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև մարտի 31-ը
2	Հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում ԲԼԿ-ներում, ԳԼԿ-ներում, հրդեհապայթյունավտանգ այլ օբյեկտներում	1. Հրդեհավտանգավորության աստիճանի գնահատում 2. Բազավորման աշխատանքների իրականացում 3. Հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև դեկտեմբերի 15-ը
3	Ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքների իրականացում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում	Մանկական հանգստյան ճամբարների հրդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Մինչև օգոստոսի 20-ը

4	Նպատակային հիդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում մայրաքաղաքի զվարճանքի բացօթյա վայրերում ատրակցիոնների և այլ սարքավորումների համապատասխանությունը գործող նորմերին վերահսկելու նպատակով	Ատրակցիոնների հիդեհավտանգավորության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	Երևանի տարածքային ստորաբաժանում	Տեխնիկական և հիդեհային անվտանգության վարչություն	Մինչև մայիսի 1-ը
5	Հիդեհային անվտանգության բնագավառում ստուգված տնտեսավարող սուբյեկտների հիդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Հիդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2023 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Տեխնիկական և հիդեհային անվտանգության վարչություն	Մինչև դեկտեմբերի 31-ը
6	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովման նպատակով՝ 2023 թվականի ընթացքում ստուգված տնտեսավարողների օբյեկտների ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության բազավորում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 31-ը
	ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ				
1	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	1. Տրանսպորտի անվտանգության բնագավառում խախտումների համար սահմանված տուգանքների չափերի բարձրացում 2. Տեխզննման կայաններում տեսաձայնագրությունները չպահպանելու համար տուգանքի սահմանում 3. Քաղաքացիների կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև մարտի 31-ը

		իրականացվող ինքնակամ շինարարությունը կանխում			
2	Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	Արտադրական վտանգավոր օբյեկտներն ըստ վտանգավորության տարանջատում, կիրառվող պատժաչափերի վերանայում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև մարտի 31-ը
3	«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկության ներկայացում	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքների միջև անհամապատասխանության շտկում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև սեպտեմբերի 30-ը
4	«Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի թիվ 182-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	Վնասակար նյութերի չափաքանակների վերանայում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև հունիսի 30-ը
5	«Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի թիվ 580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	Սահմանված պահանջների հստակեցում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 31-ը
6	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	Քաղաքաշինական օբյեկտներն ըստ ռիսկայնության կատեգորիաների դասակարգելու չափորոշիչների հստակեցում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն, Էներգետիկայի և էներգասպառման	Մինչև սեպտեմբերի 30-ը

				վերահսկողության վարչություն	
7	«Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգ շահագործումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 6-ի թիվ 1102-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում	Անվտանգության գոտիների խախտումների հետևանքով պատահարների առաջացումը կանխարգելում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 31-ը
8	ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Վերահսկման բնագավառներում անվտանգության ապահովման նպատակով ստուգումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 31-ը
9	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում	Տիեզերական գործունեության, ինչպես նաև ԵԱՏՄ մի շարք կանոնակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով առաջարկությունների ներկայացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 31-ը
	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ				

10	ՀՀ ԲՈՒՀ-երի, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում	6 մասնագետի վերապատրաստում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Մինչև դեկտեմբերի 31-ը
11	Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում	Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների բոլոր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Որակի ապահովման վարչություն	Մինչև դեկտեմբերի 31-ը
	ՔՏՀԱՏՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ				
12	Տարածքային ստորաբաժանումների կողմից 2020-2023 թվականների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն	Թերությունների և խախտումների բացահայտում, դրանց առաջացումը կանխելու նպատակով միջոցառումների ձեռնարկում	Որակի ապահովման վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Մինչև դեկտեմբերի 31-ը

Հավելված 2

7. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	ժամկետ
1	Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում, վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրությունների տարածում 1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ, 2. Քաղաքաշինության ոլորտ, 3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ, 4. Էներգետիկայի և էներգասպառման ոլորտ 5. Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտ	Սահմանված կանոնների պահպանման և իրազեկման մակարդակի բարձրացում տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շրջանում: Ըստ ոլորտների՝ **1.** Թվով 8 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք) **2.** Թվով 8 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք) **3.** Թվով 8 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք) **4.** Թվով 4 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 1 աշխատանք) **5.** Թվով 4 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 1 աշխատանք)	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ	1. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 2. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 3. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 4. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ 5. Վերջնաժամկետ- յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 3-րդ տասնօրյակ

2	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովվում, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ոլորտային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների, ղեկավարի տեղակալների մասնակցությամբ	Ամբողջ տարվա ընթացքում
3	Իրազեկող տեսանյութերի պատրաստում և հրապարակում	Հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, թափանցիկ և հաշվետվողական աշխատանքների իրականացում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ոլորտային վարչություններ	Յուրքանչյուր կիսամյակ 1 հրապարակում
4	Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 1 մամուլի ասուլիսի, հարցազրույցների կազմակերպում և անցկացում	Տեսչական մարմնի և տպագիր, առցանց ԶԼՄ-երի, հեռուստաընկերությունների ներկայացուցիչների միջև համագործակցության, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Յուրաքանչյուր եռամսյակ հարցազրույցների կազմակերպում, Մամուլի ասուլիս՝ 1-ին կամ 2-րդ կիսամյակի ավարտին
5	Ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում, գնահատում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն և Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակի ամփոփումից հետո 1 ամսյա ժամկետում

6	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունքում կանխարգելիչ միջոցառումների իրականացում	Հանրության շրջանում իրազեկվածության և անվտանգության մակարդակի բարձրացում, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքների իրականացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ոլորտային վարչություններ	Ամբողջ տարվա ընթացքում